# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 44 - 45 (16342) ՇԱԲԱԹ, 27 ՀՈՒՆԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՏԱՐԵՐՔ

## ՄՇԱԿՎՈՒՄ Է ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԹԵԹԵՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

### ՍՈՂԱՆՔԻ ՈՒ ՋՐՀԵՂԵՂԻ ՎՆԱՍԸ ԿԱԶՄԵՑ ՇՈՒՐՋ 100 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, տեղի ունեցավ տարերքի հետեւանքների վերացման պետական հանձնաժողովի նիստը:*



Ինչպես նշեց վարչապետը, առաջին հերթին հանձնաժողովը զբաղվելու է Վերեի կիրճի անվտանգության նախագծի մշակմանը: Հանձնաժողովը մշակելու է այնպիսի հիմնադրույթ, որով կատարելիք աշխատանքներում կառավարությունը կկարողանա առաջնորդել:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՑԱՎ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԻ»

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Բրատիսլավայում մասնակցեց գլոբալ անվտանգության GLOBSEC խորհրդաժողովին:*




Հանդես գալով խորհրդաժողովի շրջանակներում Բրատիսլավայում անցկացված վրաց-սլովակյան բիզնես-ֆորումում՝ Վրաստանի նախագահը հայտարարեց, որ Վրաստանը վերջին ժամանակներս անցել է կարեւոր եւ հիմնարար փոփոխությունների ուղի: «Բարելավվել են առողջապահու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## 2015-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԿԿՐՃԱՏՎԻ 140 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

*Հունիսի 23-ին Վրաստանի կառավարությունը քննարկեց 2015 թվականի պետբյուջեն շուրջ 140 միլիոն լարիով կրճատում նախատեսող տարբերակը:*



Նշենք, որ հստակեցված բյուջեի նախնական տարբերակով նախատեսված էր, 5 տոկոսի տնտեսական աճի փոխարեն, 2 տոկոս, իսկ արժեզրկումը՝ 3 տոկոս:

Ինչպես հայտարարեց Վրաս-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ



*Հունիսի 24-26-ին, եռօրյա այցով, Երեւանում էր գտնվում Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու գլխավորած պատվիրակությունը:*

*Պատվիրակության կազմում էին Վրաստանի պատիժների կատարման եւ պրոբացիայի հարցերով նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Բարամիձեն, տեղակալ Ալեքսանդր Տաբատաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Պետրոսյանն ու Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, նախարարությունների դեպարտամնտների եւ հանրային իրավունքի իրավաբանական գործակալությունների ղեկավարները: Պատվիրակությունը մասնակցեց Հայ-վրացական իրավական համագործակցության առաջին ֆորումին:*

Հունիսի 26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Վրաստանի արդարադատության եւ պատիժների կատարման ու պրոբացիայի նախարարներ Թեա Ծուլուկիանու եւ Գիորգի Մղեբրիշվիլու հետ:

Նախագահ Սարգսյանը ողջունեց հյուրերին եւ նրանց մասնակցությամբ Երեւանում կայացած Հայ-վրացական իրավական համագործակցության առաջին ֆորումը: Գոհունակությամբ փաստելով, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունն ու տարբեր ուղղություններով համագործակցությունը տարեցտարի խորանում է, Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ դա լուրջ նախադրյալներ է ստեղծում գործընկերության նոր ուղղությունները նախանշելու համար: Այս համատեքստում Հայաստանի նախագահը կարեւորեց երկու երկրների իրավական ոլորտը ներկայացնող գերատեսչությունների միջեւ ձեւավորված հարաբերությունները եւ հույս հայտնեց, որ իրավական համագործակցության ֆորումը պարբերական բնույթ կկրի՝ իր ներդրումը բերելով հայ-վրացական բարեկամական կապերի առավել ամրապնդմանն ու զարգացմանը: Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ հիշյալ գերատեսչությունների կողմից քննարկվող հարցերը հիմնականում վերաբերում են այն խնդիրներին, որոնց

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՅԱՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ «ԹԲԻԼԻՍԻ-2015» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

*Հունիսի 19-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի օլիմպիական կոմիտեների համակարգիչ հանձնաժողովի նախագահ Ջոզեֆ Լիբայի եւ երիտասարդական օլիմպիական փառատոնի մենեջեր Կատերին Նիցովայի հետ:*

EUROPEAN YOUTH OLYMPIC FESTIVAL TBILISI 2015

Հանդիպմանը քննարկվեցին «Թբիլիսի-2015» եվրոպական-երիտասարդական փառատոնի կազմակերպչական աշխատանքներին առնչվող հարցեր:

Համակարգչային հանձնաժողովի ներկայացուցիչները գնահատեցին օլիմպիական օբյեկտներում իրականացվող աշխատանքները: Նշվեց, որ, չնայած տարերքի արդյունքում ստեղծված ճգնաժամային իրավիճակին, աշխատանքները չեն դադարեցվել: Ինչպես հայտարարեց Ջոզեֆ Լիբան, իրենք դիտել են օլիմպիական օբյեկտները եւ համոզվել, որ Թբիլիսին պատրաստ է փառատոնի անցկացմանը:

Վարչապետի հետ կայացած հանդիպմանը ներկա էին Վրաստանի սպորտի եւ երիտասարդության գործերով նախարար Տարիել Խեչիկաշվիլին ու «Թբիլիսի-2015» կազմակերպչական կոմիտեի նախագահ Ալեքսի Ախվլեդիանին:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վետո կդնի «Ազգային բանկի մասին» օրինանախագծին, ըստ որի, նախատեսվում է հիմնել ֆինանսական վերահսկողության գործակալություն: Այդ մասին հայտարարեց երկրի ղեկավարի տնտեսական հարցերով խորհրդական Գիորգի Աբաշիշվիլին:*

Նրա խոսքերով, «Ազգային բանկի մասին» օրենքում ընդունած փոփոխությունը խախտում է Եվրամիության հետ Վրաստանի Ասոցիացման համաձայնագրի դրույթները:

«Մենք բազմիցս հայտարարել ենք, որ արհեստավարժության տեսանկյունից մեզ բացարձակապես հայտնի չէ օրինանախագծի նպատակահարմարությունը: Հետեւաբար, բոլոր այն նախագծերի վրա, որոնք այս կամ այն չափով վնասում են երկրի տնտեսական զարգացմանը, այդ թվում կարեւորագույն՝ ֆինանսական հատվածի զարգացմանը, կդրվի վետո»,- հայտարարեց Աբաշիշվիլին:

Նշենք, որ փոփոխությունների համաձայն, որոնք պաշտպանվել են խորհրդարանական կոմիտեների կողմից, հուլիսի 1-ից Ազգային բանկին առընթեր հիմնվելու է հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ ֆինանսական վերահսկողության գործակալություն: Նոր կառույցի հիմնական գործառույթը ֆինանսական հատվածի թափանցիկության եւ կայունության աջակցությունն է: Նախատեսվում է, որ օրինագիծը ներկայացվելու է խորհրդարանի հաստատմանը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՑԱՎ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան, կրթության ու սոցիալական պաշտպանության համակարգերը: Մենք այն երկրներից ենք, որտեղ հարկային միջավայրը ամենապարզն է ու ամենաճկունը, որը գործարարություն վարելու տեսանկյունից վարկանիշային առաջատար դիրքերում է: Վրաստանը կարողացավ հաղթահարել կոռուպցիայի հիմնախնդիրը եւ ներկայումս, կոռուպցիայի դեմ պայքարի առումով, առաջատար երկրների շարքում է»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Նրա խոսքերով, երկիրը նշանակալից քայլեր է կատարել էկոնոմիկայի զարգացման ուղղությամբ, մասնավորապես, 2014 թվականի հունիսին Վրաստանը Եվրամիության հետ ստորագրել է Ասոցիացման համաձայնագիր, ինչը նպաստում է երկրի տնտեսական ներուժի զարգացմանը:



Բրատիսլավա կատարած այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնի, Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկայի, Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու, Խորվաթիայի նախագահ Կոլինդ Գրաբար Կիտառովիչի հետ:

Մեծ Բրիտանիայի վարչապետի հետ հանդիպմանը, Դեւիդ Քեմերոնը իր ցավակցությունը հայտնեց Թբիլիսիում տեղի ունեցած ողբերգության առիթով: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների ու համագործակցության խորացման հեռանկարներին առնչվող հարցեր: Կողմերը քննարկեցին նաեւ Մոսկվայի եւ անջատողական Սուխումիի ու Ցխինվալիի միջեւ ստորագրված, այսպես կոչված, դաշնակցային պայմանագրի հարցը: Դեւիդ Քեմերոնը կրկին ընդգծեց Մեծ Բրիտանիայի կայուն դիրքորոշումը Վրաստանի եվրաինտեգրման եւ ՆԱՏՕ-ի անդամագրության էական փաթեթի իրականացման հարցում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՅՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԿԴԱՌՆԱՆՔ ՀԻԱՆԱԼԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱԿԱՆԱՏԵՍԸ»



***Հունիսի 24-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելեց «Թբիլիսի-2015» եվրոպական-երիտասարդական օլիմպիական փառատոնի շրջանակներում կառուցվող օբյեկտներ:***

Վարչապետի հավաստմամբ, Վրաստանի համար կարեւոր նշանակություն ունի բարձր մակարդակով միջազգային մրցույթների անցկացումը: «Համոզված եմ, որ մենք կդառնանք հիանալի օլիմպիադայի ականատեսը: Դա նշանակալից երեւույթ է, քանի որ ետխորհրդային տարածքում եվրոպական պատանեկան օլիմպիական փառատոնն առաջին անգամ կանցկացվի Վրաստանում»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նշենք, որ «Թբիլիսի-2015»-ի պաշտոնական բացումը տեղի կունենա հուլիսի 26-ին, եւ մրցումները կշարունակվեն մինչեւ օգոստոսի 1-ը: Փառատոնին մասնակցելու հայտ է ներկայացրել 50 երկրների ավելի քան 4 հազար մարզիկ: Փառատոնի ծրագրում ներառվել են 9 մարզաձեւեր՝ ծյուդո, թենիս, լող, վոլեյբոլ, հեծանվային սպորտ, մարմնամարզություն, ձեռքի գնդակ, բասկետբոլ եւ թեթեւ ատլետիկա:

ԱՅԺ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

***Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին պաշտոնական այցով գտնվում է Բրյուսելում:***



Նա մասնակցեց ՆԱՏՕ-ի անդամ երկրների պաշտպանության նախարարների ամենամյա հանդիպմանը: Այցի շրջանակներում, նա հանդիպումներ ունեցավ ինչպես Եվրամիության, Եվրախորհրդարանի, այնպես էլ՝ Հյուսիսատլանտյան ալյանսի ղեկավար մարմինների հետ:

Հանդես գալով ընդլայնված նիստում՝ Թինա Խիդաշելին ընդգծեց Աֆղանստանում իրականացվող խաղաղարար առաքելությունում Վրաստանի ակտիվ մասնակցությունը: Նա կրկին անգամ հավաստեց երկրի հավատարմությունը գլոբալ անվտանգության ապահովման ուղղությամբ ՆԱՏՕ-ի առջեւ ստանձնած պարտավորությունը:

Եվրախորհրդարանում կայացած հանդիպմանը, Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին նշեց, որ երկիրը կատարում է ստանձնած պարտավորությունները, հետեւաբար հարկ է արագացնել Վրաստանի անայցեգրային պայմանակարգի հանձնման ընթացակարգը:

# ՆԱՏՕ-ի Agile Spirit ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

***Վրաստանի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ռումինիայի, Լիտվայի եւ Լատվիայի զինվորականները կմասնակցեն ՆԱՏՕ-ի Agile Spirit-2015 զորավարժություններին, որոնք հուլիսին կանցկացվեն Թբիլիսիի մերձակա Վազիանիի ռազմաբազայում:***

Այդ մասին հայտարարել է եվրոպայում դաշինքի միավորված զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ գեներալ Ադրիան Բրեդշոուն:

«ՆԱՏՕ-ն Վրաստանին օգնում է պաշտպանունակության զարգացման, ռազմական կրթության ու զորավարժությունների անցկացման հարցում: Այս տարի Վրաստանում կստեղծվի ՆԱՏՕ-Վրաստան համատեղ վարժական կենտրոն: Իսկ հուլիսին կանցկացվեն Agile Spirit-2015 բազմազգ զորավարժությունները»,-Թբիլիսիում գտնվելու ընթացքում հայտարարեց Բրեդշոուն:

Վրաստանի պաշտպանության նախարարության տվյալներով, զորավարժություններին, որոնք մշակվել են Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության փաթեթի շրջանակներում, վրացական կողմից կմասնակցեն չորրորդ մեքենայացված բրիգադի 42-րդ գումարտակի անձնակազմը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի ծովային հետեւակայինների կորպուսի մինչեւ 220 զինծառայողներ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ԱՆԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՊԵՍԶԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ ՉԿՈՐՑՆԵՆ ԼԵԶՈՒՆ, ՀԱՎԱՏԸ, ՍԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՆԴԵՊ, ՈՐ ԱՅԴ ՄԱՐԴԻԿ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՉԿՈՐՉԵՆ»

***Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը հանդես եկավ Համայն վրացական կոնգրեսի անցկացման նախաձեռնությամբ:***



Սվետիցխովելի տաճարում իր անցկացրած կիրակնօրյա պատարագի ժամանակ, Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը, խոսելով արտասահմանում ապրող վրացիների մասին, ցանկություն հայտնեց իրականացնել նրանց հաշվառումը: «Մենք այսօր պետք է մտածենք արտասահմանում ապրող մեր հայրենակիցների մասին՝ ինչով օգնել նրանց: Մարդկանց արտասահմանում ավելի դժվար է հաղթահարել փորձությունը: Ի՞նչ ենք անելու, որպեսզի մեր հայրենակիցները չկորցնեն լեզուն, հավատը, սերը հայրենիքի նկատմամբ: Եթե նրանց մոտ վերանա վրացական ոգին, այդ մարդիկ մեզ համար կկորչեն: Ինչ ենք անելու, որպեսզի կապ ստեղծենք արտասահմանում ապրող վրացիների եւ հայրենիքի միջեւ: Մեզ մոտ ցանկություն է առաջացել հոկտեմբերի 14-ին՝ Սվետիցխովելիի տոնին, գումարել Համայն վրացական կոնգրես»,- հայտարարեց Կաթողիկոս-Պատրիարքը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ողջունեց Համայն վրացական կոնգրես անցկացնելու վերաբերյալ Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի նախաձեռնությունը: «Դա հիանալի գաղափար է, որի իրականացումը մեզ թույլ կտա միավորել եւ կենտրոնացնել ողջ աշխարհի մասշտաբով վրացիների ներուժը: Պատրաստակամություն եմ հայտնում լրիվությամբ աջակցել կոնգրեսի անցկացմանը: Համոզված եմ, որ նման միավորումը կնպաստի մեր ազգի համախմբմանն ու վրացական պետության հզորացմանը»,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հետ առնչվում են Հայաստանի ու Վրաստանի քաղաքացիները, ուստի կարեւոր է, որ դրանք երկկողմ քննարկումների, փորձի փոխանակման շնորհիվ արդյունավետ լուծումներ ստանան, եւ քաղաքացիներն զգան կատարված բարելավումները:

Հանդիպման առիթով, նախագահ Սերժ Սարգսյանը եւս մեկ անգամ իր անկեղծ զորակցությունը հայտնեց Վրաստանի բարեկամ ժողովրդին՝ Թբիլիսիում տեղի ունեցած հեղեղումների ու տարերային աղետի կապակցությամբ եւ հույս հայտնեց, որ Վրաստանի կառավարությունն ու Թբիլիսիի քաղաքային իշխանությունները կանեն ամեն հնարավորը՝ շուտափույթ հաղթահարելու այդ աղետի հետեւանքները: Սերժ Սարգսյանը Հայաստանի կողմից կրկին պատրաստակամություն հայտնեց, անհրաժեշտության դեպքում, աջակցություն ցուցաբերել բարեկամ Վրաստանին:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանն ընդգծեց նաեւ, որ Հայաստանը շահագրգռված է ԵԱՏՄ-ին անդամակցելուց ու Վրաստանի՝ ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո նոր պայմաններում շարունակել հայ-վրացական միջպետական հարաբերությունները, զարգացնել եւ խորացնել:

Թեա Ծուլուկիանին եւ Գիորգի Մղեբրիշվիլին շնորհակալություն հայտնեցին նախագահին ջերմ ընդունելության համար, ապա ընդգծեցին, որ, Հայաստանի արդարադատության նախարարի Վրաստան կատարած այցի ժամանակ, երկու երկրների միջեւ իրավական ոլորտում ձեւավորված համագործակցության ներկայիս ձեւաչափը մտադիր են պահպանել եւ ֆորումը դարձնել ավանդական, փորձի փոխանակում իրականացնել ու զարգացնել համագործակցությունը՝ ի նպաստ երկու բարեկամ երկրների:

## ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է

Հունիսի 24-ին Երեւանում Վրաստանի պատիժների կատարման ու պրոբացիայի հարցերով նախարար Գիորգի Մղեբրիշվիլին եւ Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը ստորագրեցին քրեակատարողական ոլորտում համագործակցության մասին հուշագիր:

Փաստաթղթի շրջանակում, կողմերը կհամագործակցեն քրեակատարողական ծառայության արդյունավետ կառավարման, քրեակատարողական ոլորտի հետ կապված օրենսդրության զարգացման, ՔԿՀ-ների անվտանգության ապահովման ուղղություններով:

Ստորագրման արարողությունից հետո, Հովհաննես Մանուկյանը շնորհավորեց ներկաներին համագործակցությունը խորացնելու առիթով եւ հույս հայտնեց, որ հուշագրում ամրագրված միջոցառումների իրականացումը երկուստեք օգտակար կլինի: Խոսելով Հայաստանի եւ Վրաստանի միջեւ դատաիրավական ոլորտում ձեռք բերված հաջող համագործակցությունից՝ նախարարն առանձնացրեց քրեակատարողական ոլորտում փորձի փոխանակման ու մեկը մյուսի սխալները չկրկնելու կարեւորությունը:

Իր հերթին, Գիորգի Մղեբրիշվիլին շնորհակալություն հայտնեց Հայաստանի արդարադատության նախարարին, ով առաջինն էր զանգել իրեն եւ իր զորակցությունն ու աջակցությունը հայտնել Վրաստանում տեղի ունեցած աղետի կապակցությամբ:

Անդրադառնալով ստորագրված փաստաթղթին՝ Գիորգի Մղեբրիշվիլին նշեց, որ պրոբացիայի ոլորտում Վրաստանն ունի հարուստ փորձ եւ պատրաստ է Հայաստանի հետ կիսել անցած ճանապարհին ձեռք բերած հաջողություններն ու ներկայացնել հնարավոր բարդությունները շրջանցելու իրենց տարբերակը:

Նշենք, որ հուշագրով նախատեսվում է իրականացնել կալանավորված անձանց եւ դատապարտյալների նյութակենցաղային ապահովման, նրանց բժշկական սպասարկման, վերասոցիալականացման ու վերաինտեգրման, պրոբացիոն ծառայության ոլորտում համատեղ կրթական ու փորձի փոխանակման ծրագրեր:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## 2015-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԿԿՐՃԱՏՎԻ 140 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, 140 միլիոն լարիով պետբյուջեի կրճատումը բավական է երկրի էկոնոմիկայի կայունացման համար:

Նշենք, որ ՆԳ նախարարության բյուջեն կկրճատվի 10 միլիոնով, իսկ պաշտպանության նախարարությանը՝ 5 միլիոն լարիով: Բյուջեի կրճատումը կառնչվի նաեւ մյուս գերատեսչություններում: Այսպես, ընդհանուր առմամբ, 70 միլիոն լարի ընդհանուր գումար կտնտեսվի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների, գյուղատնտեսության ու էներգետիկայի նախարարությունների բյուջեներից: Կրթության եւ գիտության նախարարության բյուջեն կկրճատվի 12 միլիոն լարիով, ֆինանսների նախարարությանը՝ 7 միլիոնով, իսկ խորհրդարանինը՝ 6 միլիոնով:



Նոդար Խադուրու հայտարարության համաձայն, պետբյուջեի կրճատումը չի առնչվի հիմնարար եւ սոցիալական ծախսերին: «Հիմնարար եւ սոցիալական ծախսերը չեն կրճատվում, նվազեցվում են միայն ընթացիկ ծախսերը: Մենք ունենք համապատասխան ռեսուրսներ, որպեսզի տարվա ընթացքում ավելացնենք հիմնարար ծախսերը: Մենք ներկայումս բանակցում ենք դոնորների հետ, եւ ստացվելիք միջոցների նշանակալից մասը կհատկացվի հիմնարար ծախսերին»,- հայտարարեց Խադուրին:

ԿՐԹԱԿԱՆ

## ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՀՈԳԵԲԱՆՆԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ, ԱՅԼԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ»



***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն հայտարարեց, որ իր գլխավորած գերատեսչությունը շարունակում է գործել ճգնաժամային իրավիճակներում գործողության նախօրոք մշակված ծրագրի համաձայն:***

Նրա խոսքերով, հոգեբաններն այդ ծրագրի շրջանակներում աշխատանք են իրականացնում ոչ միայն երեխաների, այլեւ նրանց ծնողների հետ: «Հոգեբանական կենտրոններն աշխատում են ոչ միայն իրենց գործողության վայրում, այլեւ իրականացնում են արտագնա աշխատանքներ: Հոգեբանական օգնություն է ցուցաբերվում ոչ միայն Թբիլիսիի, այլեւ տրածաշրջանի երեխաների համար: Ինչպես գիտեք, մեզ մոտ 15 դպրոցներում ստեղծվեց արտակարգ իրավիճակ: Այսօր այդ երեխաները գտնվում են հսկողության ներքո: Մենք նրանց առաջարկել ենք տարբեր ճամբարներ: Մեր հոգեբաններն աշխատում են ոչ միայն երեխաների, այլեւ նրանց ծնողների հետ»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

Անդրադառնալով նոր ուսումնական տարվա համար տպագրվելիք դասագրքերին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարը հայտարարեց, որ նոր ուսումնական տարվա դասագրքերը կտպագրվեն քիչ քանակությամբ: Նախարարի հայտարարության համաձայն, առաջիկա ուսումնական տարվա համար ընդամենը 30% դասագրքերը կլինեն նորահրատարակ: «Անցյալ տարի մեր դպրոցների համար նոր դասագրքերի մասը կազմել է 60%: Հաջորդ տարի քանակությունը կնվազի եւ կկազմի առավելագույնս 30%»,- նշեց Թամար Սանիկիձեն:

## ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԵՐՆ ԱՐԴԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՆ

***Ինչպես տեղեկացրել է Քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնը, Միասնական ազգային քննությունների համար քննական թեստերն արդեն բերվել են Վրաստան:***

Դրանք տպագրվել էին փաստաթղթերի գաղտնիության հարցում մեծ հեղինակություն վայելող բրիտանական «Սթիվեն Օստին» ընկերությունում:

Թեստերը «Վրացական փոստ» մաքսային տերմինալի միջոցով բերվել էին Թբիլիսիի միջազգային օդանավակայանում, Ազգային բանկի ու տարածաշրջանային ոստիկանության գլխավոր վարչության պահեստարանում:

Հիշեցնենք, որ Միասնական ազգային քննությունները մեկնարկում են հուլիսի 2-ին: Միասնական ազգային քննությունների համար գրանցվել է ավելի քան 40 հազար դիմորդ, դրամաշնորհի ստացման մրցույթում գրանցում է անցել շուրջ 4 հազար ուսանող: Ընդհանուր մագիստրոսի քննությունների համար գրանցում է անցել 12500 թեկնածու, իսկ մանկավարժների առարկայական քննության հավակնորդների թիվը հասնում է 17 հազարի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԼՈՒՐՋ ՎՆԱՍ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՎ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



***Վերջին երկու օրերի ընթացքում, տեղատարափ անձրեւներն ու կարկուտը լուրջ վնաս հասցրեցին Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի առանձին տնտեսություններին:***

Հունիսի 19-ի տեղատարափ անձրեւի ընթացքում ջրածածկ եղավ Սամցխե-Ջավախեթիի ենթակայանը, որի արդյունքում, Աբասթումանին հոսանքազրկվեց: Էլեկտրաէներգիայի մատակարարումը վերականգնվեց մեկ օր անց:

Տարերքի հարվածից անմասն չմնաց նաեւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի մունիցիպալիտետը: Հունիսի 21-ին հորդառատ անձրեւը, կարկուտը, ուժեղ քամին զգալի վնաս հասցրեցին Մառնեուլիի բնակելի տներին, էլեկտրահաղորդման գծերին:

Ինչպես նշեց Մառնեուլիի մունիցիպալիտետի վարչության փոխնախագահ Թեմուր Բերիձեն, տարերքից լրջորեն տուժել են Ծերեթելի, Թամարիսի եւ Ղզիլաջո գյուղերը, գրեթե լրիվությամբ ոչնչացվել են խաղողի ու մրգատու ծառերի այգիները: Վարչության փոխնախագահի հավաստմամբ, ներկայումս աշխատանքներ են տարվում մունիցիպալիտետի ենթակառույցների վերականգնման, տուժածներին օգնություն ցուցաբերելու օգնությամբ:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 3,7 ՀԱԶԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ

***2010-ից մինչեւ 2014 թվականն ընկած ժամանակաշրջանում արտասահմանում ձերբակալվել է Վրաստանի 3 հազար 715 քաղաքացի, ովքեր մեղադրվել են օրենքը խախտելու մեջ:***

Այդ մասին հաղորդել է «Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտ» (IDFI) ոչ կառավարական կազմակերպությունը:

2013 թվականին, 2010 թվականի համեմատությամբ, արտասահմանում ձերբակալված Վրաստանի քաղաքացիների թվաքանակը եռապատկվել է (1178): 2014 թվականին այս ցուցանիշը կրճատվել էր մինչեւ 695: 2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, ձերբակալվել է Վրաստանի 342 քաղաքացի:

Դրա հետ մեկտեղ, 2010-2014 թվականներին հայրենիք է արտաքսվել Վրաստանի 8 հազար 610 քաղաքացի: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2013 թվականին (2 հազար 280 մարդ): 2014 թվականին արտաքսվածների թվաքանակը կրկնակի կրճատվել է (1031): Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հայրենիք է ուղարկվել Վրաստանի 201 քաղաքացի:



IDFI-ն ձերբակալված եւ արտաքսված քաղաքացիների վերաբերյալ տվյալները ներկայացրել է Վրաստանի ԱԳ նախարարությանը: Տեղեկատվությունն ստացվել է 23 երկրներում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններից:



### ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՋՈՀՎԱԾ ՓՐԿԱՐԱՐԻՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

*Վրաստանի նախագահի հրամանագրով, Վակե-Սաբուրթալոյի հրշեջ-փրկարար, առաջին բաժանմունքի ավագ տեսուչ Զուրաբ Նուգաշվիլին ետմահու պարգեւատրվել է «Քաղաքացիական անձնազոհության համար» մեդալով: Հիշեցնենք, որ Զուրաբ Նուգաշվիլին զոհվեց հունիսի լույս 14-ի ողբերգական գիշերը՝ մարդկանց փրկելով ջրհեղեղից:*

*Ջրհեղեղի ժամանակ, կենդանաբանական այգու կենդանիներին փրկելու համար, այգու աշխատակիցներ Գուլիկո Կանցելիձեն եւ Գիվի Դվալին ետմահու պարգեւատրվել են շքանշանով:*

### ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿՎԵԼ «ԿԱԲԵԼԻ» ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԸ

*Անձնական երաշխավորությամբ, դատարանն ազատ է արձակել, այսպես կոչված, «կաբելի» գործով մեղադրվող պաշտպանության նախարարության նախկին աշխատակիցներին: Նրանց երաշխավորությամբ, հանդես են եկել մի քանի քաղաքագետներ, այդ թվում՝ նաեւ պաշտպանության նախարարը:*

*Դատարանը չբավարարեց գրավի վերաբերյալ դատախազության դիմումը եւ մեղադրյալներին ազատ արձակեց դատարանի դահլիճից:*

*Հիշեցնենք, որ, ձերբակալության փոխարեն, գրավի սահմանման դիմումով դատարանին դիմել էր դատախազությունը: Պատճառը նախնական կալանքի իննամսյա ժամկետի սպառումն էր: Դատախազը պահանջում էր մեղադրյալներին ազատել 10 հազար լարի գրավի դիմաց:*

*Թբիլիսիի քաղաքային դատարանը չբավարարեց այսպես կոչված կաբելների գործի դադարեցման վերաբերյալ պաշտպանվող կողմի հայցը:*

*Գործի հետաքննությունը կվերսկսվի հուլիսի 10-ին:*

### ՅԱՆ ՔԵԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ՆՈՐ ԴԵՍՊԱՆ



*ԱՄՆ-ի Սենատը Վրաստանում նոր դեսպանի պաշտոնում հաստատել է Յան Քելիին. նա իր տիկնոջ հետ Թբիլիսի կժամանի սեպտեմբերին:*

*Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնակատար Ռիչարդ Նորլանդը Քելիին շնորհավորել է պաշտոնում հաստատվելու կապակցությամբ եւ երկրից մեկնելու պատրաստություն է տեսնում:*

*Նորլանդը Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնում հաստատվել է 2012 թվականի մարտին:*

*Քելին 2010-ից մինչեւ 2013 թվականը աշխատել է որպես Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպությանն առընթեր ԱՄՆ-ի ներկայացուցիչ:*

### ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԷԹԵՐ ԿԱԿՈՒԼԻԱՆ



*Կյանքի 66-րդ տարում վախճանվել է վրաց ճանաչված երգչուհի Էթեր Կակուլիան:*

*Բժիշկների հավաստմամբ, նա տառապում էր անբուժելի հիվանդությամբ եւ բուժման կուրսը ոչ մի արդյունքի չհանգեցրեց:*

*Մի քանի օր առաջ Էթեր Կակուլիային Իսրայելից, որտեղ նա անցնում էր բուժման կուրսը, տեղափոխեցին Թբիլիսի:*

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

Հունիսի 25-ին Երեւանում իր աշխատանքն սկսեց Հայ-վրացական իրավական համագործակցության երկօրյա ֆորումը, որին մասնակցեցին Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին եւ Վրաստանի պատիժների կատարման ու պրոբացիայի հարցերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին: Միջոցառումն իրականացվել է Հայաստանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ:



Մինչ ֆորումի բացումը, Հովհաննես Մանուկյանն առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել Թբիլիսիում տեղի ունեցած ջրհեղեղի հետեւանքով զոհերի հիշատակը:

Բացելով ֆորումը՝ Հայաստանի արդարադատության նախարարն այն կարեւորել է մի քանի տեսանկյունից. նախ, որ սա իրավական առաջին հավաքն է եւ հավակնություն ունի դառնալ մշտական՝ ընդգրկելով այլ երկրների ներկայացուցիչներին, եւ որ քննարկվելիք թեմաները շատ կարեւոր են ու արդիական՝ հատկապես դատաիրավական բարեփոխումների առումով: «Մեր երկրների միջեւ երկարամյա համագործակցության ընթացքում առաջին անգամ անցկացվում է նմանատիպ ֆորում, որը հավակնում է դառնալ մշտական: Այս ձեւաչափով միջոցառումները հատկապես կարեւոր են Հայաստանի եւ Վրաստանի երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման ու ամրապնդման, ինչպես նաեւ մեր երկրներում ընթացող իրավական բարեփոխումների համատեքստում»,- նշեց Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը՝ հավելելով, որ Հայաստանը եւ Վրաստանը համագործակցությունն արդարադատության ոլորտում հասել է բարձր մակարդակի:

Հովհաննես Մանուկյանը շնորհակալություն հայտնեց Թեա Ծուլուկիանիուն Վրաստանում հայերի կեցության խնդիրների հարցում ցուցաբերած գործուն ջանքերի համար:

Իր հերթին, Թեա Ծուլուկիանին կարեւորեց Հայաստանի հետ համագործակցության նման հարթակը եւ նշեց, որ ֆորումի գաղափարը ծնվել է Թբիլիսիում՝ Հայաստանի արդարադատության նախարարի վերջին այցի ընթացքում: Անդրադառնալով այս տարվա մարտին Թբիլիսիում երկու երկրների արդարադատության նախարարությունների միջեւ ստորագրված հուշագրին՝ նա նշեց, որ համատեղ աշխատանքներ են տարվելու նոտարիատի, ՔԿԱԳ-ի եւ մի շարք այլ ոլորտներում: Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին կարեւորեց նմանատիպ ֆորումներում նախկին ԽՍՀՄ երկրների արդարադատության նախարարությունների ներգրավումը: «Եթե հաջողվի ներգրավել նաեւ այլ երկրների արդարադատության նախարարություններին, ապա հնարավոր կլինի ստեղծել Հարավային Կովկասի իրավական համակարգ, իրավաբանական տարածաշրջան, ինչը շատ կարեւոր է»,- հայտնեց նա:

Իր խոսքում, Վրաստանի պատիժների կատարման եւ պրոբացիայի հարցերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին շնորհակալություն հայտնեց հայ գործընկերներին ջերմ ընդունելության ու միջոցառման կազմակերպման համար եւ նշեց, որ պրոբացիայի ծառայության ներդրման հարցում ունեցած իրենց փորձը մանրամասն ներկայացվեց ֆորումի մասնակիցներին: Նա տեղեկացրեց, որ Վրաստանն այս ոլորտում իրական առաջընթաց է գրանցել. անցյալ տարի հիմնադրվել է Ազատության սահմանափակման գերատեսչություն, որը միակն է տարածաշրջանում եւ կենտրոնացած է դատապարտյալների վերաինտեգրման հիմնահարցերի վրա: Նրա խոսքով, ազատության սահմանափակման վայրերում բացվել են աշխատատեղեր պատիժը կրող անձանց համար, վերացվել է ազատազրկված անձանց նկատմամբ խոշտանգումների խնդիրը, բարելավվել է նրանց կենսապայմանները: Հատուկ ուշադրություն է դարձվում քրեակատարողական հիմնարկից դուրս պատիժների կիրառմանը:

Հայ-վրացական իրավական համագործակցության ֆորումի երեք նստաշրջանի ընթացքում գործընկերները հանդես եկան զեկույցներով, ներկայացրին երկու պետությունների իրավական ոլորտի զարգացման համար նախատեսված եւ ընտրված մեխանիզմներն ու ձեւաչափերը:

Հայաստանի եւ Վրաստանի արդարադատության ոլորտի ներկայացուցիչները մասնագիտական քննարկումներ ունեցան նաեւ երկու պետություններում իրականացվող ինստիտուցիոնալ եւ օրենսդրական բարեփոխումների, տեղեկատվության ազատության ներկայիս վիճակի, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ ու օրենսդրական միջոցառումների, էլեկտրոնային կառավարման աշխատանքների, քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքների բարեփոխումների, առկա խնդիրների եւ հեռանկարային զարգացման, կրկնահանցագործությունների կանխարգելման մեխանիզմների, պրոբացիոն ծառայության իրականացված բարեփոխումների, անչափահասների արդարադատության բարեփոխումների մասին:






Չշրջանցվեցին նաեւ տարածաշրջանում համատեղ հետաքրքրություն ներկայացնող արդարադատության համակարգին առնչվող առկա եւ համակողմանի լուծումներ պահանջող մարտահրավերները:

Ֆորումի ընթացքում քննարկվել են Հայաստանում ինստիտուցիոնալ եւ օրենսդրական բարեփոխումների, ակտիվների էլեկտրոնային հայտարարագրման համակարգի, քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքների բարեփոխումների, առկա խնդիրների ու հեռանկարային զարգացումների, ինչպես նաեւ CPT չափանիշների վերաբերյալ հարցեր:

Հայ-վրացական իրավական համագործակցության ֆորումի երկրորդ օրը քննարկվեցին բաց կառավարման գործընկերության, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող մի շարք հարցեր:

## «ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՍՐՏԱՄՈՏ Է ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԵՎ ԵՂԲԱՅՐ ՀԱՅ ԱԶԳԻ ՑԱՎԸ»

Հունիսի 25-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին ու պատիժների կատարման եւ պրոբացիայի հարցերով նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի ուղեկցությամբ, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Վրաստանի պատվիրակության անդամները ծաղկեպսակ զետեղեցին հուշահամալիրում եւ գլուխ խոնարհեցին անմեղ զոհերի հիշատակին: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն Սուրեն Մանուկյանը նախարարներին եւ նրանց ուղեկցող անձանց ներկայացրեց Հայոց ցեղասպանության հուշահամալիրի պատմությունը, ուղեկցեց նրանց թանգարան: Շրջայցից հետո, նախարարները թանգարանի պատվո հյուրերի մատյանում թողեցին հետեւյալ գրառումը. «Վրաց ժողովուրդն անկեղծորեն ցավակցում է հայ ժողովրդին եւ կիսում է նրա վիշտը 20-րդ դարասկզբի Օսմանյան Կայսրությունում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ: Վրաց ժողովրդին սրտամոտ է մեր բարեկամ եւ եղբայր հայ ազգի ցավը: Մենք խոնարհվում ենք մահացածների անմահ հիշատակի առջեւ»:

## ԿԱՐԵՎՈՐՎԵՑԻՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՋԵՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 25-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին եւ պատիժների կատարման ու պրոբացիայի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի ուղեկցությամբ, Հայաստանում աշխատանքային այցի ավարտին այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ հանդիպեցին Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, իր ցավակցությունը հայտնեց Վրաստանի աղետալի ջրհեղեղի զոհերին՝ նշելով, որ հետեւել են դեպքերին՝ աղոթելով զոհվածների հիշատակի ու վիրավորների շուտափույթ ապաքինման համար:

Վեհափառը կարեւորեց հարեւան եղբայրական, քրիստոնյա Վրաստանի հետ առկա բարեկամական ջերմ հարաբերությունները եւ դրանց զարգացմանն ու խորացմանը նպաստող տարբեր ձեւաչափերի միջոցառումները՝ գոհունակություն հայտնելով մասնավորապես արդարադատության ոլորտում երեք նախարարությունների միջեւ ձեւավորված սերտ հարաբերությունների եւ զարգացող համագործակցության առիթով:

Զրույցի ընթացքում, Գարեգին Երկրորդը անդրադարձավ Վրաստանի հայ համայնքի հավատավոր զավակների հոգեւոր կյանքի կազմակերպմանն առնչվող որոշ խնդիրների, այդ թվում՝ մի քանի չգործող, դրանց թվում եւ մի քանի հայկական եկեղեցիների, որոնք 30-ական թվականներից փակ են, Վիրահայոց թեմին վերադարձնելու հարցին:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը, ներկաներին տալով իր Հայրապետական օրհնությունը, ողջույններ փոխանցեց Վրաստանի պատրիարք Իլիա Երկրորդին:

*«ՎՐԱՍՏԱՆ» - «ԱՐՄԵՆՊԵՍ»*

